ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 25 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Վաչիկ Կարապետյանի եւ Լուսինե Ամիրբեկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վաչիկ Կարապետյանը եւ Լուսինե Ամիրբեկյանը 14.03.2016թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասը եւ 233 ցուցիչ 1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Դիմողները գտնում են, որ իրենց կողմից վիճարկվող դրույթները չեն ապահովում իրավական որոշակիություն, որի արդյունքում ստեղծվում է հայեցողական կիրառմամբ դատական պրակտիկա:

Ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթները չեն ապահովում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացում:

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող դրույթներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին, այլ նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 16.10.2012թ. ՍԴՈ-1052 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկվեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից:

Միաժամանակ, դիմողները ներկայացրել են միջնորդություն պետական տուրքի վճարումից իրենց ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործը ենթակա է ընդունման մասնակի:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու պահանջի մասով դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման, քանի որ վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-752 որոշումը: Հետեւաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի մասով քննության ընդունումը ենթակա է մերժման:

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ 26.08.2015թ. ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել՝ առանց քննության թողնել վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը ՀՀ վերաքննիչ դատարանի 30.06.2015 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել 03.08.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացրել միջնորդություն՝ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և վերականգնելու վերաբերյալ: Սա այն պարագայում, երբ դիմողներն իրենց վճռաբեկ բողոքում ներկայացրել են ծանոթագրություն այն մասին, որ ՀՀ վերաքննիչ դատարանի 30.06.2015 թվականի որոշումն ստացել են 03.07.2015 թվականին, ուստի վճռաբեկ բողոք ներկայացնելու վերջնաժամկետը լրանում է 03.08.2015 թվականին, և խնդրանք՝ դատական ակտը հրապարակելու պահից մեկամսյա ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բողոքարկվող որոշումն ստանալու պահից այդ ժամկետը հաշվարկելու մասին:

Ելնելով վերոշարադրյալից, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողներն իրավասու են դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Վաչիկ Կարապետյանի եւ Լուսինե Ամիրբեկյանի անհատական դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:

2. «Վաչիկ Կարապետյանի եւ Լուսինե Ամիրբեկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Վաչիկ Կարապետյանին եւ Լուսինե Ամիրբեկյանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

4. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

25 մարտի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-10